ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 սեպտեմբերի 2013 թվականի N 40-Ա Հարցման կարգով

ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՄԱՆ, ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱԳԱՐԻՆ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ /

Քանի որ ՀՀ կառավարության՝ 09.08.2007թ. թիվ 1033-Ն որոշմամբ հաստատված Սևան քաղաքի գլխավոր հատակագիծը չի բավարարում ներկայիս քաղաքաշինական պահանջներին, իսկ Գագարին գյուղը չունի գլխավոր հատակագիծ, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշումը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հավանություն տալ քաղաքապետի կողմից ներկայացված Սևան քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի լրամշակման և փոփոխության, ինչպես նաև Սևան համայնքի վարչական սահմաններում գտնվող Գագարին գյուղի / բնակավայրի / գլխավոր հատակագծի մշակման նախագծման առաջադրանքին:

	Կողմ	դեմ	ձեռնպահ
1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ			
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ			
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ			
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ			
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ			
6. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ			
7. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ			
8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ			
9. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ			
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ			
11. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ			
12. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ			
13. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ			
14. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ			
15. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ			

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հոկտեմբերի 2013 թվականի N 41-Ա

ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԻՐՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/ ՁԵԿ. Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ /

Քանի որ Սևան քաղաքի Նաիրյան փողոցում առկա օրախնդիր է ավտոմեքենաների թողունակությունը մեծացնելը և ամենօրյա խցանումներից խուսափելը, և այն, որ նշված փողոցի ծառերը վերաճելու ենթակա չեն, խանգարում են մարդկանց անցուդարձին, խաթարում են քաղաքի արտաքին տեսքը, շրջակա միջավայրը ծանրաբեռնում են թափոններով, անհրաժեշտություն է առաջացել դրանք փոխարինելու նոր, մշտադալար տնկիներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ ներկայումս Նաիրյան փողոցում կատարվում են մեծածավալ վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ, ուստի

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Թույլատրել Սևան քաղաքի Նաիրյան փողոցի հարակից տարածքներում՝ համաձայն հաստատված հատակագիծ-սխեմայի, կատարելու ավտոկայանատեղերի կազմակերպման և դրանց համար նախատեսված տարածքներում գոյություն ունեցող ծառերի ծառահատման աշխատանքներ:
2. Առաջարկել քաղաքապետին՝ ստեղծել համապատասխան հանձնաժողով՝ հատվող ծառերը չափագրելու, դրանք սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրելու կամ՝ որպես վառելափայտ, վաճառելու՝ արժեքը՝ որպես ռեսուրսավճար, մուտքագրելով բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

	Կողմ	դեմ	ձեռնպահ
1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ			
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ			
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ			
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ			
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ			
6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ			
7. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ			
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ			
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ			
10.ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ			
11. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ			
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ			

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հոկտեմբերի 2013 թվականի N 42-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/ ՋԵԿ. ԷԴԻԿ ՂԱՋԱՐՅԱՆ /

Ղեկավարվելով «ՏԻՄ» ՀՀ օրենքի 54-րդ և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածների պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Համայնքի 2013թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Գույքահարկ համայնքի վարչական տարածքում գտնվող շենք-շինությունների համար, պակասեցնել 5500.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 23500.0 հազ. դրամ.
2. Հողի հարկ համայնքի տարածքում գտնվող հողերի համար, պակասեցնել 1000.0 հազ. դրամ հաստատել տարեկան 8000.0 հազ. դրամ.
3. Գույքահարկ փոխադրամիջոցների համար, պակասեցնել 2149.2 հազ. դրամ հաստատել տարեկան 37000.0 հազ. դրամ.
4. Տեղական տուրքեր՝ պակասեցնել 1000.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 9000.0 հազ. դրամ, ն / թ՝ համայնքի վարչական տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի իրացման թույտվության տեղական տուրքը պակասեցնել 1000.0 հազ. դրամի չափով, հաստատել տարեկան 5400.0 հազ. դրամ
5. Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ / սուբվենցիաներ /, ավելացնել 14922.9 հազ. դրամ, հաստատել տարեկան 20701.8 հազ. դրամ.
6. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձակալության վարձավճար՝ պակասեցնել 1500.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 4500.0 հազ. դրամ.

7. Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ՝ պակասեցնել 1500.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 4500.0 հազ. դրամ.
8. Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենք-շինությունների օրինականացման համար վճար՝ պակասեցնել 1500.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 3500.0 հազ. դրամ.
9. Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ՝ պակասեցնել 773.7 հազ. դրամ, հաստատել տարեկան 522.4 հազ. դրամ.
10. Հաստատել համայնքի 2013թ. բյուջեի եկամուտների ճշտված թիվ 1 հատվածը:

/ հավելվածները կցվում են /

	Կողմ	դեմ	ձեռնպահ
1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ			
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ			
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ			
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ			
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ			
6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ			
7. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ			
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ			
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ			
10.ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ			
11. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ			
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ			

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հոկտեմբերի 2013 թվականի N 43-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄՍՈՒՐ - ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ. ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության՝ 02.02.2012թ. «ՀՀ կառավարության՝ 2002 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը հավանություն տալու մասին» N 54 արձանագրային որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 4 արձանագրությունը,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել համայնքային ենթակայության մսուր - մանկապարտեզների կանոնադրությունների փոփոխությունը

1. Կանոնադրությունների 3-րդ գլխի 17-րդ կետը կարդալ՝

✓ մանկապարտեզ ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:

2. Մսուր - մանկապարտեզ ՀՈԱԿ-ների տնօրեններին՝

✓ սույն որոշման հետ կապված կանոնադրական փոփոխությունը ներկայացնել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Սևանի տարածքային բաժին գրանցման:

	Կողմ	դեմ	ձեռնպահ
1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ			
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ			
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ			
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ			
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ			
6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ			
7. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ			
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ			
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ			
10.ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ			
11. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ			
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԲԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հոկտեմբերի 2013 թվականի N 44-Ն

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՄԱՍՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿԵԼԻՍ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԹՈՒԼՅՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ. ՍԱՄՎԵԼ՝ԴԱՎԹՅԱՆ /

Իրողություն է այն, որ հարկատուների որոշ մասը տարիների ընթացքում չի կատարել իր հարկային պարտավորությունները և համայնքային բյուջեի նկատմամբ հողի և գույքահարկի մասով կուտակել է պարտքեր:

Սևանի քաղաքապետարանի կողմից խնդրին լուծում տալու նպատակով դատարան են ներկայացվում վարչական գործեր՝ գումարի բռնագանձման վերաբերյալ:

Վկայակոչելով դատական պրակտիկան և հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածը, այն է՝ «Հարկային պարտավորությունները հաշվարկելու եռամյա վաղեմության ժամկետի վերաբերյալ վերապահում է կատարվել գույքահարկի և հողի մասով», քաղաքապետարանի կողմից ներկայացված հայցերը բավարարվում են մասամբ՝ վերջին 3 տարվա՝ 2010-2012թթ. համար հաշվարկված հարկերի և դրանց նկատմամբ հաշվարկված տույժերի բռնագանձման պահանջի մասով: Մինչ այդ՝ 2010թ-ից առաջ հաշվարկված պարտավորությունների մասով հայցերը ենթակա են մերժման՝ իրավական առումով հիմնավորված չլինելու պատճառաբանվածությամբ:

Միաժամանակ հայց ներկայացնող կողմը՝ քաղաքապետարանը, կատարում է պետական տուրքի վճարումներ համայնքային բյուջեի առանց այն էլ սուղ միջոցներից:

Հաշվի առնելով այս փաստարկները, հիմք ընդունելով նախադեպերը՝ անհրաժեշտություն է առաջացել ընդառաջել այն հարկատուներին, որոնք վերջին 3 տարվա ընթացքում չկատարած հարկային պարտավորությունների մասով կկատարեն համապատասխան վճարումներ՝ ազատվելով նախկին պարտքերի վճարումից:

Այս գործընթացը կնպաստի նաև հավաքագրման առավել արդյունավետ և արագ կազմակերպանը, որը համայնքային բյուջեի կատարման համար լուրջ երաշխիք է:

Ելնելով վերոհիշյալից, առաջնորդվելով հարկատուների հետ աշխատելու կառուցողական մոտեցումներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հարկատուներին ընդառաջելու, հարկային բեռը թեթևացնելու, հարկման գործընթացն արդյունավետ դարձնելու նպատակով գույքահարկի և հողի մասով հարկային պարտավորությունները հաշվարկել ընթացիկ տարվան նախորդող վերջին 3 տարվա համար՝ կիրառելով վաղեմության ժամկետ:

	Կողմ	դեմ	ձեռնպահ
1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ			
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ			
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ			
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ			
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ			
6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ			
7. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ			
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ			
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ			
10.ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ			
11. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ			
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ			

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԴԱՎԻԹԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ